ՄՐՑՈՒՅԹԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2006թ. մայիսի 3-ի N 478-Ն հրամանով հաստատված ,,Պետական բաժնեմասի /բաժնետոմսերի/ կառավարման լիազորված մարմինների կողմից 50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերությունների վերստուգող հանձնաժողովի անդամների /վերստուգողների/ ընտրության մրցութային հանձնաժողովի ձևավորման, մրցույթի անցկացման և մրցույթի մասնակիցներին ներկայացվող պահանջների /չափանիշների/ մասին,, կարգի 14-րդ կետի և 59-րդ կետի ,,բ,, ենթակետի

որոշում եմ՝

1. 2011թ. հունիսի 28-ին ,,Զոլաքարի ԲԱ,, ՓԲԸ տնօրենի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթը համարել չկայացած մրցույթին մասնակցելու համար ոչ մի դիմում չներկայացվելու պատճառով:
2. Մարզպետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնին /բաժնի վարիչ՝ Ն. Մաթևոսյան/՝ սահմանված կարգով կազմակերպել ,,Զոլաքարի ԲԱ,, ՓԲԸ տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթի անցկացման հետ կապված աշխատանքները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ն. ՊՈՂՈՍՅԱՆ